



ԲԱՆԱՐԱԿԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԼՈՒՍԱԽՈՐՉՔՆ ՑԱՌԱՋ

Հին՝ զգուած ու պանձացուած աւան-  
դութիւն մ'է մեր ազգին մէջ՝ հայ եկե-  
ղեցւոյ սկզբնաւորութիւնն առաջելոց ժա-  
մանակէն զնելի ինչու պէտք էր աղոր հա-  
մար։ Առացելոյ մը քարոզութիւնը հայ  
հողին վրայ։ Բախտը փոխան մէկի՝ եր-  
կու առաջեալ առւեր է մեզ, Թաղէսու ու  
Բարթողոմէսու, չհաշուելով դեռ ուրիշնե-  
րը։ Սակայն անոնց քարոզութիւնը միայն  
չէր բաւեր, այլ ամոռ մ'ալ հաստատուե-  
լու էր նոյն առաջելոց ձեռցով, որ պա-  
հուէր մինչեւ ցս։ Գրիգոր։ Վասն զի զը-  
ժուարին էր՝ որ «Թաղէսոսվ կամ Բար-  
թողիմէսոսվ սկսած ու վերջացած քրիս-  
տոնէութիւնը կատարելապէս առաջելա-  
կան կարենայ բառէլ, երբ երկուցուկէն  
դար ետքը յանկարծ կը վերնօնձիւզի Գրի-  
գորով մը...։ Եսն իսկ ամենէն հաստար-  
մաս ծառը իր բունը կտրելին 200 դր-  
250 տարի ետքը վերաստին ընծիւզ չար-

Ճակեր՝ կը խորհրդածէլի իրաւամբ Մա-  
ղաքիւ արք. Օբմանեան<sup>1</sup>.

Հարկ էր ուրեմն կամուրջ մը ճգել ա-  
ռաքելոց ու լուսաւորչի միջն, զոր մեր  
նախնիք չէին խորհնած ընկել. Այս պաշ-  
տոնը յանձն առաւ նոր հայ զբականու-  
թիւնը, և գտաւ՝ անաշխատ, թշ մը բար-  
րի կամք բաւական էր՝ անհուններ եպիս-  
կոպոսաց, շարեց ժամանակազրական կար-  
գաւ, կապեց իրարու հետ, նշղեց անոնց  
իշխանութեան ու մահուան թուականնե-  
րը, զանց ընկելով՝ իրը չափազանցու-  
թիւն՝ օրերն ու ժամերը միայն. իսկ  
Օրմաննեան իւր պատրիարքական իշխա-  
նութեամբ և սուրբ հայրապետի շատի-  
նանին բարձրացուց զանոնց<sup>2</sup>, իւ այսպէս  
ունեցանք հայ առաքելական եկեղեցու

մատ ծաղը իր բռնը կարելի է 200-ից ավելի լավ լինել, կազմ. 68-69. — Զ. Արտ. 58, 47, 50, 250 տարի ետքը վերաբեր ընթաց չափը՝ 54, ձև.

անընդհատ յաջորդութիւնը մինչև ցդրի-  
գոր։ Ազգասիրութիւնը կատարեց և ա-  
ւարտեց իւր պաշտօնը։ Խակ ի՞նչ կ'ըսեն  
ողջ առաջարկութիւնն ու պատմութիւնը, մանա-  
ւանդ մեր զարուն ծնունդ խոժող պատ-  
մաքննութիւնը, որ գործ չունի զգացմանց  
հետ, որ պատմական ճշմարտութիւնները  
չի զոհեր երազայրդոր ազգասիրութեան,  
և իւր հաստ սրով կը բաժնէ վէպը ստոյգ  
պատմութիւնն։ Ի՞նչ կ'արժեցնէ այս՝ Հայոց  
առաքելականութեան աւանդութիւնը և ա-  
նոր ազրիւնները։ Տեսնենք։

### Ա. — ԱՌԱՔԵԱԼՔ ՀԱՅՈՑ

ԹԱԴՐՈՍ. — 1. Այս անունը կապուած  
է յշեալ աւանդութեան հետ մեր զրակա-  
նութեան սկիզբէն։ Երիցազոյն պատմա-  
գիրը Փաւատոս, որ գրեց յետ 386 թուա-  
կանին, ուր կը հասցնէ իւր պատմութիւնը,  
և հայացաւ տատից գիւտէն վերջ, իւր  
գործը կը սկսի նոյն առաքելոյն յիշատա-  
կութեամբ։ « ի քարոզութեան թաղէսոփ  
առաքելոյ և ի նորին յելից (այս ինքն  
մաէն) և ի մարտիրոսութենէն՝ մինչև ի  
կատարումն վարպատեսութեան Գրիգորի  
և իւրոյ հանգստեանն, և յառաքելասպան  
Սանատրկոյ արքայէն՝ մինչև յակամայ՝  
(հրաժց ուժով) հնազանելին հաւատոցն, ...  
այն ամենայն ի ձեռք այրոց գրեցան»։  
Կ'ակնարկէ երկու հեղինակաց, որոց մին  
նկարագրերը է Թաղէսոփ քարոզութիւնն ի  
Հայու ու մահէ Սանատրկէն, և միւսը՝ լու-  
սաւորչի առաքելութիւնն ու Հայոց դար-  
ձը։ Վերջնոյս պատմիչն Ազաթանգեղոս  
էր, որոյ բնագրը, ոսկեզրիք հաւատարեան ներկայ  
խմբագրութենէն անտարակոյս բաւական  
տարրեր, կանուքի էր ցան զՓաւատոս։  
Կար թաղէսոփ պատմիչն ալ, որուն կ'ակ-  
նարկէ նաև Խորենացին, յիշելով « զգա-  
լուսաւ առաքելոյն ի Հայու, և հաւատալ  
Սանատրկոյ, և թողուլ զհաւատան յերկիւղէ

նախարարացն Հայոց, և կատարումն ա-  
ռաքելոյն և որց ընդ նմա ի զաւափին  
Շաւարչան, որ այժմ կոչի Արտազ, և  
պատառումն քարին և յիրար զալ և ըն-  
դունել զմարմին առաքելոյն, և առնուլ  
անտի աշակերտացն և թաղելի ի զաւափին,  
և մարտիրոսանալ թագաւորի զստերն  
Սանդիմոյ հոււպ ի ճանապարհն, և աստ  
ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց »։  
և կը հաստատէ ինքն ևս՝ թէ այս ամէնը  
« յառաջազոյն դրեալ յայլոց », ինց չէ  
կրկներ։

ՈՒՐՆԵՐ են այդ այլը՝ որոց կը յդին  
զմեալ երկու պատմիչներդ։ Օտարներ չէին  
կարող լինել, որոց անձնանօթ էր այդ ա-  
մէնը, ինչպէս պիտի տեսնենց, այլ հայեր  
միայն։ Եւ երկուց էին ազննց, մին՝ Վիկյա-  
րանուրին թաղէսոփ ասաքերոյն կոչուած  
զրութիւնը, որ արդէն հրատարակուած է։  
Սա զրուած էր յոյն կամ ասորի լեզուաւ,  
ուստի և զրոց զիւտէն ու Փաւատոսէն ալ  
յառաջ, որոց « Սամուէլ եպիսկոպոսն », որ  
զատելով բարբառէն՝ Եղարու անն է,  
հայերէնի կը թարգմանէ՝ ըստ իւր յիշա-  
տակարանին։ Այգեմն զայն ունէնին Փաւ-  
ատոս ու Խորենացին իբրև ազրիւր յի-  
շեալ տեղենութեանց, բաց ի յայտնութեանէ  
նշխարաց առաքելոյն ու Սանդիմոյ, զոր  
Խորենացին առաւ երկրորդ ազրիւրէ մը,  
Գիտս Եշխարաց կոչուած զութենէն՝, շա-  
րազրուած ցան զինց կանուն՝ իբր Յու-  
հան Սանդիմունոյ ու Վահան մարզպանի  
ժամանակ կամ անոցմէ ոչ շատ ուշ, որոց  
օրով՝ ըստ նոյն գրենթեան՝ պատահէր է  
այդ վէպը։ Հրատարակուած կան ուրիշ  
երկու պատմութիւնն ևս՝ նոյն նիւթին  
վերաբերեալ, որ միշնադարեան անպէտ  
քաղուածներ են հիներէն և անօգուտ մեզ։

2. Արդ՝ այդ բոլորին մէջ երիցազոյն  
է Վիկյարանուրինը, որ իսկապէս կը բո-  
վանդակէ Խորենացին վերև թուած թա-  
գական աւանդութեան ամրող մատուն-

1. Հմա. Փաւ. 38. — 2. Նոյն՝ 5. — 3. Խորհ.,  
Բ, լու. — 4. Սովեր, Ը, 9. — 5. Հաւանօրէն թարգ-  
մանչաց ընկերը. Հմա. Թարգ. 1907, 60-61. — 6.

Սովեր, Ը, 58. — 7. Անդ՝ Ը, 87. — 8. Անդ՝ 96. —  
9. Անդ՝ 59, 77.

թը: Եւ շարադրուած է՝ ոչ թէ «յաշաւ կերտաց թաղէսոփ», ինչպէս կարծեց հրատարակիչը<sup>1</sup>, այլ դ դարուն, յետ Արդարու զրոյցին, որ խառնուած է իւր մէջ, և որուն հայկական շարունակութիւնն է ինք, զթաղէսոփ Եղեսիայէն, ուր քարոզիչ էր գնացեր և բուժեր զԱրդար, փոխադրելով ի Հայաստան, և հոն քարոզել, զարձեր ընել ու Սանատրկէն մարտիրոսանալ տալով Սանդիտի հետ: Ոչ միայն հնագոյն, այլ և առաջին աղբիւրն է զրուածս թաղէական հայ աւանդութեան, ելած՝ ինչպէս ըսի՝ դ դարու նախանձայոյզ ազգայնոյ մը զրչէն, որուն հաւատացին, հետեւցան և իրարու փոխանցեցին մեր հետազայ պատմիչներն ալ, և նախ ինցն Փաւատոսու, կամ աւելի հաւանօրէն՝ իւր թարգմանիչը, որ վերոյիշեալ վկայութենէն զատ քանի մը տեղ ալ կ'ակնարկէ թաղէսոփ, բսելով Յուսկան համար՝ թէ «նստուցին զնա յաթռոն առաքելոյն թաղէսոփ», զոր և կ'անուանէ «զաթռուակալն զվիճակալն զվիճակին թաղէսոփ առաքելոյն»: և ս. Ներսիսի մասին՝ թէ ստացաւ «զաթռոն թաղէսոփ առաքելոյ», կամ «զթաղէական աթռոն միւսանզամ ելից»: Ա. Կարիքը<sup>2</sup>, որուն հետեւցան նաև Յ. Մարկուարու<sup>3</sup>, Լ. Պըտիս<sup>4</sup>, Հ. Մէնէլիշեան<sup>5</sup> և Գէորգ Մինորպավ<sup>6</sup>, նկատելով միւս հնագոյն պատմչաց լուսթիւնը, ինչպէս են «Կորին, Եղիշէ, Եղնիկ, Ազաթանգեղոս, Ղազար և Սերէու», կասկածեցան Փաւատոսի այդ վկայութեանց հարազատութեան վրայ, զանոնց յետ Խորենացւոյն ներմուծուած համարելով, և զվերջինս շնոր նոյն աւանդութեան, Բայց իրենց տեսութիւնը թուից մ'էր լոկ՝ զուրկ համոզիչ փաստերէ, և իրաւունց չունէին, բստ որում տե-

ղեկութեան ծագումը ցան զՓաւատոսու ալ հին էր: Իրենց նշանակած պատմիչներն ալ անհաշիւ կերպով կոչած են, անոցմէ կորին կամ Եղիշէ առիթ չունեցան յիշելու՝ ոչ միայն առաքեալը, այլ զլուստորիչ անզամ, և որոյ մասին լսելով՝ անտեղեակ չէին հարկաւ անորս Եղնիկ պատմութիւն չզրեց, որպէս զի խօսէր Հայոց առաքելոյն վրայ, Սերէոսէ յառաջ ծանօթ էր արդէն թաղէսոփ, ինչպէս պիտի ցուցնեմ: Իսկ Ազաթանգեղոսու ու Փարպեցին պիտի նպաստն մեզ ուրիշ եղանակաւ:

Փաւատոսուն ու Խորենացիէն<sup>8</sup> ի զատ՝ ընդունեցան նոյն աւանդութիւնը, թաղէսոփ յաջորդ նշանակելով զԴրիգոր, Յովհաննէն թ կաթողիկոն<sup>9</sup> Զ գարուն<sup>10</sup>, Արրահամ կթղ. Է շարուն<sup>11</sup>, և յաջորդաբար մեր բարոր հին զրիշնելը, որոնց պարզապէս կրկնողներ եղան իրենց կարգացածին, և որով իրենց վկայութիւնն ոչ ինչ կը զօրեն մեր խնդրոյն լուծման համար: Թաղէսոփի ու Բարթողոլոմէոսի ի Հայս առաքելութեան հաւատացին առանց կառկածի՝ արդի զրեթէ բոլոր հայ մատենացիրը ևս. ինչպէս Սիրիթարեանը<sup>12</sup> Զամշեան<sup>13</sup>, Աւգերեան<sup>14</sup>, ինճիճեան<sup>15</sup>, Փափառեան<sup>16</sup>, Հ. Բ. Մարգիսեան<sup>17</sup>, Գաթրճեան<sup>18</sup>, Բ զեռ այլը. և ազգայիններէն՝ Ն. Վ. Մէլիք Թանգեան<sup>19</sup>, Օրմանեան<sup>20</sup>, և մէկ խօսցով՝ որովհետ անհընար է զրբերն ու յօդուածները թուելորրը: Հ. Ալիշան շեղում մ'ըրաւա. յիշելով Թաղէի մասին զանազան լրերը, ըստու, և այլ թերես անստույժ են. ստոյզն կ'երեկի՝ թէ ոչ թաղէսոփ՝ այլ իր մէկ աշեկերին (որ իր անուամբ ճանչցուած է) զալն ի Հայաստան և յարցունիսն» և այլն<sup>21</sup>. Բայց ընդունեցաւ զԲարթողոլոմէոս<sup>22</sup>:

1. Անդ. 7. — 2. Փաւա. 80, 40, 71, 79. — 3. Հանդ. Անդ. 1896, էլ 174 և. — 4. Անդ. 1906, 40. — 5. Vacant, I, 1892. — 6. Հանդ. 1896, 174 և.թ. — 7. Քրիստ. մասաք. 24-25. — 8. Ըստ Կարիքի, Պետրիք և Պ. Մերոպայ: — 9. Տես և Խորեն. Բ, լու, զա: — 10. Գր. բարոց, 78. — 11. Անդ. 189. — 12. Զամէ. Ա. 289-91, 296, 588. — 13. Վարդ-

սրբաց, Գ, 59. — 14. Հետիւս. Գ, 186. — 15. Պատմ. Եկեղ. 54, 57. — 16. Ագոր. 185, 187. — 17. Տեղ. Պատմ. Բ, 81, 83. անսայզ ըսելով Բարթողիէոսի բարուցմաք. 30, 89. — 18. Եկեղ. Պատմ. 30. — 19. Հայ. Եկեղ. Իրաւ. 86. — 20. Արք. Հյան. 11. Ակդու. 28-25. — 21. Արք. յրիս. 15. — 22. Անդ. 28-29ՀՀ.

իսկ ինձ կը մայ կրթուլին հեռանալ այդ հասարակաց և յարգուած մատենա- գրաց համոզումէն, ինչ որ բարյապէս դժուարին կացութեան մը կը մատնէ զիս: Բայց որովհետեւ պատմութիւնն իւր սովոր պումբերն ունի, ուսկից չէ կարելի խոյս տալ, ուստի հարճղորուած եմ խօսելու առանց վերապահութեան:

Յ. Ո՞գ էր ուրեմն Եղեսիոյ և Հայոց քարոզիչ Թաղէոսը: Ոյոցելոց ցարոցու- թեանց ու նահատակութեանց ժամանա- կակից պատմիչներ չեն եղած. այլ հե- տագայ զիիշներ աւանդութիւնէ առնելվ՝ փոխանցեր են մեզ ինչ որ իմացեր են: Երկուը են այդ անուամբ ծանօթ առա- քեալց. մին՝ բնկեր երկոտասանից<sup>1</sup>, որ կը կոչուի նաև Յուղա<sup>2</sup>, և միաւ՝ եօթա- նանից մին ըստ աւանդութեան: Եկեղե- ցոյ հնագոյն պատմիչն Եւսերիոս կեսա- րացի, որ կը զբէր 325 թուկն, աղոնց առաջնոյն անունը զուգեց՝ ոչ ըստ աւե- տարանին՝ ուրիշի մը հետ, «Յուղա՝ որ և Թովման<sup>3</sup>». և ըսաւ՝ թէ նոյն «Թով- մայի՝ որպէս ի առջութենէ ունիմք, վի- ճակեցան Պարթէց»<sup>4</sup>. և թէ այս Թովման՝ «Թաղէոս» այն որ ի համարոյ եօթա- նատան աշակերտաց Քրիստոփի էր, ա- ռաքեաց յԵղեսիա» ցարոցելու<sup>5</sup>: Նաև Նի- կեփոր՝ Յուղա Թաղէի առաքելութեան ասպարէց կը նշանակի, Հրէաստանէ ու շրջականերէն զատ, զԱրարիա, Ասորից, Միջազիսը ու Պարսկաստան<sup>6</sup>. և ըստ Բար Ասթրեայ կը նահատակուի Արարտի, Ակոյի կամ Լիրանանու մէջ<sup>7</sup>: Ուրեմն սա գործ չէ ունեցեր Եղեսիոյ հետ. և Ա. Մայէր կը զիտէ՛ թէ անոր թղթին ասու- րական հնագոյն թարգմանութիւնն (չիսո- քիտոյ) բացակայութիւնն ալ կը ցուցնէ՝ որ նա Ասորուց հետ որ և է յարաք- րութիւն չէ ունեցել<sup>8</sup>. ապա թէ ոչ՝ ա- մենէն աւելի անոր պիտի փարէին անոնք:

Գալով Եղեսիոյ ցարոցչին, անոր անձը կը ճանաչենց Արգարու ծանօթ զրոյցէն միայն, որ ասորական աւանդութիւն ու շարադրութիւն մ'էր, ի ակզրան համա- սու և գրեթէ այն չափուն մէջ, յորում Եւսերիոս գտաւ զայ Եղեսիոյ դիւանէն ու թարգմանեց<sup>9</sup>: Անոր բովանդակութիւնն այս է: Արգար իշխան կամ թագաւոր Եղեսիոյ, անրուժելի ցատկ մը վարա- կուած, կը լսէ Յիսուսի հրաշագործու- թեանց համբաւը, և նամակաւ կը խնդրէ զալ րժշկել զինքն ալ: Փրկիչը կը պա- տասխանէ նամակով, «որոյ և միւսին պատճէնց պահուած են, - թէ աշակերտու- ներէն մին պիտի զար բուժելու զինքրու- թեան համբարձման Յիսուսի՝ Թովմաս հոն կը յէ զարդէու, որ կը ցարոցէ ու կը բժշկէ նոյն բաղացին մէջ. ապա Արգա- րու ևս կը ասրուի, զոր կը տարձնէ ու կ'ապարէնէ Եղեսիութենէն: Այս զրոյցին տեղեակ էր և ս. Եփրեմ, ինչպէս կը զգացնէ համապոտիւս. «Թաղէոս՝ մի յեւ- թանասնից անտի յՄւկա յաւուրու Ար- գարու՝ պահապան տեղոյ<sup>10</sup>, և բժշկեաց- գնա՝ զի հիւանդ էր<sup>11</sup>»: Աւանդութիւնս յետոյ Եղարու սկիզբը<sup>12</sup> կ'ընջլայնի Վար- դականութիւն Աղդայի կոչուած գորութեան մէջ, որ նոյն է Լարուբնեայ հայացած գործին հետ, որ թիշ կը զանապանի ա- սորի բնագրէն: Ասոր կը յաջորդեն երկու ժամանակագրութիւնը Եղեսիոյ, մին անա- նուն՝ 540ին, և միւսը Գիոնեսիոսի Տել- մահեցաւոյ՝ 776ին. և ուրիշ շատ գրիշ- ներ հետ զիտէ՝ իրարմէ առնլով<sup>13</sup>:

4. Սակայն պէտք է զիտնալ՝ որ վէպս, երրեմն մեծ ընդունելութիւն գտած ամ- բողջ քրիստոնէութեան մէջ, այսօր կո- րուսած է իւր արժէրը, առասպել մը նկա- տուած արևմտեան գրականութիւնն, և ստեղծուած իրը Գ դարու կիսուն: Ոչ ոք այլ ևս եւրոպացի ցննադատներէն կ'ըն-

1. Մաթ. Փ. 3. Մթէ. Գ. 18. որ և Ղերենու: — 2. Ղեր. Զ. 16. Յ. Ժ. Ժ. 22. Գրէ. Ա. 18. — 3. Եսակ. Ա. Ժ. — 4. Նոյն Գ. ա. — 5. Նոյն Ա. Ժ. Բ. ա. — 6. Պատ. Եկէ. Բ. 40. — 7. Չա-

bot, Chron. I, 148. — 8. Gosschler, XII, 899. — 9. Եսակ. Ա. Ժ. — 10. Տեղակայ՝ ըստ Եսակեայ: — 11. Եփրեմ, Բ. 259. — 12. Հմա. Cabrol, IV, 2071. — 13. Հմա. անդ՝ 2065. Vacant, I, 68-69.

զայն՝ Արգէն ՚ դարէն ս. Հերո-  
նիմոս կը հերքէր Յիսուսի թղթակցուա  
թեան վաւերականութիւնը<sup>9</sup>, Քննութիւնը  
ցոյց տուաւ՝ որ յիշեալ Արգարը, ժամա-  
նակակից Քրիստոսի, համանուն թագաւո-  
րաց մէջ հինգերորդ, և մականուամբ Ու-  
րամա (== Ըն), չէր կարող ըրիստոնեայ  
լինել: Ոյլ այս պատուոյն արժանի եղաւ  
նախ Արգար Ը, Գ դարու սկիզբը<sup>10</sup>, որոյ  
արծագանգն է զրոյցոյ Մինչև թագաւորս  
անոր նախնիք իրենց խուրին վրայ՝ ըստ  
դրամոց՝ կը կրեն հեթանոսական նշաններ,  
երեց աստղ ու մահիկ, ցուցնելով՝ որ  
անծանօթ էին ըրիստոնէութեան. և առա-  
ջին անգամ սա կը դնէ խաչն անոնց  
տեղ<sup>11</sup>: Եւսերիոս զայս կը կոչէ «այր  
սուրբ»<sup>12</sup>, և Եպիփան՝ «այր սրբեալ»<sup>13</sup>:  
Լկերկ ֆաստերով կ'ապացուցանէ՝ որ նա  
ըրիստոնեայ կը լինի յետ 202 թուակա-  
նին, և այդ պատճառաւ նաև բարեկամ  
էր Բարդածանի<sup>14</sup>: Նոյն հանգամանցները  
կը հաստատեն նաև Յ. Պարիսոս<sup>15</sup>, Լիփ-  
սիոս, Վիզուորու<sup>16</sup> և ուրիշներ: Աւելին զուտ  
վիպական է Ե Արգարու զարձն ի հաւատաւ,  
ինչպէս և իւր թղթակցութիւնը Յիսուսի  
հետ:

շակերտն Ազգայ (Aggaî), զոր կը պահա-  
նէ Արգարու որդին<sup>17</sup>. և ասոր կը յաշորդէ  
Պալուտ (Palout), որ եպիսկոպոսն կը  
ձեռնադրովի Արագիրն անտիքրացիէն, ձեռա-  
նադրուած և սա Հոռվայ Զեփիրինոս  
հայրապետէն (198-217): Այս պարա-  
գային Պալուտ կը հանդիպա 200ի մասերը,  
բնականապէս միասին հոն բաշելով իւր  
երկու նախորդներն ալ<sup>18</sup>, և այսու Աղդայ  
և ըրիստոնեայ Արգար Ը կը զուգադիպին  
իրարու: Սակայն նկատելով՝ որ Ազայ և  
Պալուտ յիշուած չեն Եւսերիոսէ, Լկերկ  
կասկածեցաւ որ յետսամուտ լինին աւան-  
դութիւնն մէջ<sup>19</sup>. և որուն կրնանց պատաս-  
խաննէլ թէ կեսարացի պատմիչը պար-  
զապէտ կ'ընդհատէ Թաղէի զրոյցը, ա-  
ռանց յիշելու անոր մահը, որով պիտի  
կարենար յաշորդներն ալ յիշառակել,  
կամ ժխտել լոռութեամբ: Անհրաժեշտ չէ  
կարծե՛ որ զրոյցն ամբողջովին թարգ-  
մանեց նա:

ինչ կը հետևի այսի Այս թէ Թաղէի անմն ու առացելութիւնն յշղսիա, զրոս այդ աւանդութենէն միայն զիտենց, նոյն պէս զուրկ են պատմական հիմքերէ: Պրզտոր ազբերէ բղխած ջուրը մի և նոյն գոյնը կ'ունենայ, կարծեցեալ առաքելոյս Թաղէու անոնը յունականն է, զոր Ասու բից Աղջայ (Addai կամ Աղջէ) կ'ըսէին, Եսաբերոս կը լուէ անոր վախճանի մասին, մինչ ըստ Վարդապետուրեան Աղջայի՝ նա կը մեռնի խաղաղութեամբ Եղեսիոյ մէջ, իրեն յաջորդ նշանակելով խոյրարար ա-

კასტრონ ქედვა (AggaI), ვირ ჰც თუან-  
სკ ქრისტიანი იყრინ <sup>10</sup>. ს ასორ ჰც კაზრობე  
შაიორი (Palout), ირ ხელის კიყავი ჰც  
ძმინა ეპიტეტი ქრისტიანი ანთერგოგების, ძმინ-  
ს ანთერგოს ს ას ჯილდუმა ღენწერების  
საკარავალის (198-217). ას აუარა-  
ფაქტის ქალიკოს ჰც განმეობა 200ს მოსხერი,  
ონა აკანა აუდის ძმას ჩან გავალი ჰც  
ზერგის სახით იყრინ ალ <sup>11</sup>, ს აუარი ქედვა  
ს ერთობლივ ქრისტიანი ჰც კაზრობების  
ხელის საკარავალის ირ ჰც კაზრობების  
შაიორი. საკარავალის ირ ჰც კაზრობების  
შაიორი ექვივა ს ას სახით იყრინ ალ <sup>12</sup>. ს ირი კაზრობების  
შაიორი ექვივა ს ას სახით იყრინ ალ <sup>13</sup>. ს ირი კაზრობების  
შაიორი ექვივა ს ას სახით იყრინ ალ <sup>14</sup>.

թամնայն դէսկ՝ մառախուղը կը պատէտ Արդայի անձին շուրջ, որ առ առաւելն է Արգարու ժամանակակիցը Կրնայ լինել, եթէ բոլորովին ալ վիպական չհամարինք, բայց ոչ երրեք աշակերտ Յիշուասի: Չրոյցիս կերտող եղեսացի ասորին, որ մեզ նման իւր եկեղեցւոյն առաքելականութեան մարմաջէն բնուած էր, տեսնելով որ երկուասան առաքելոց քարոզութեան վայրեցը ճշդուած էին աւանդութեան կութանքն, առաւ այդ Արդայի անունը, և խորամանկութեամբ կախեց եօթանասնից միոյն վզէն, որոց անուանը առ աեղերն անյայտ էին, և Եղեսիոյ առաքեալ ըրաւազայն, իսկ Ը Արգարու զերը տուաւ Ե Արգարու, և ձնաւ զրայցը:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. *Zeser*, U. *Umrüster*, *Zeser*. U. 1896. 173 *et seq.*  
 — 2. *zibet*. *ibid.* 30. — 3. Cabrol, IV, 2065-67.  
 Vacant, I, 72. Tourn. 408. *et seq.* — 4. Cabrol,  
 2068. Guschler, I, 19. — 5. *zubet*. *zibet*. B., 296.

*Urolophus* *maculatus*. — 6. Cabrol. 199, w. — 7. Cabrol, 2066. — 8. Vacant, I, 73. — 9. Vigour. I, 40. — 10. Cabrol, 2072-73. — 11. *Urolophus* 2073. Vacant, 72. — 12. Cabrol, 2082-83.